ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի հինգ անդամների ընտրությունների անցկացման մասին

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 144-րդ հոդվածի 2-րդ մասով և «Դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 166-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով Ազգային ժողովի խմբակցություններն Ազգային ժողովի կողմից ընտրվող Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի հինգ անդամների պաշտոնների համար առաջադրել են հետևյալ թեկնածուներին.

Առաջին պաշտոնում (պաշտոնավարման հնգամյա ժամկետ) «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» և «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» խմբակցություններն առաջադրել են Գագիկ Գարուշի Հարությունյանին:

Երկրորդ պաշտոնում (պաշտոնավարման հնգամյա ժամկետ) «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» և «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» խմբակցություններն առաջադրել են Գևորգ Բալաբեկի Դանիելյանին:

Երրորդ պաշտոնում (պաշտոնավարման հնգամյա ժամկետ) «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» և «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» խմբակցություններն առաջադրել են Լիպարիտ Ռոբերտի Մելիքջանյանին:

Չորրորդ պաշտոնում (պաշտոնավարման եռամյա ժամկետ) «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» և «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» խմբակցություններն առաջադրել են Հայկ Արտաշեսի Հովհաննիսյանին:

Հինգերորդ պաշտոնում (պաշտոնավարման եռամյա ժամկետ) «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» և «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» խմբակցություններն առաջադրել են Սերգեյ Գուրգենի Մեղրյանին:

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 144-րդ հոդվածի 5-րդ մասի՝ հայտարարում եմ, որ Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի հինգ անդամների առաջին պաշտոնում ընտրության հարցի քննարկումը կսկսվի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ փետրվարի 27-ի նիստում, ժամը 10.30-ին, իսկ մյուս չորս պաշտոններում ընտրությունների մասին հարցերը կքննարկվեն նախորդ պաշտոնում ընտրության հարցի քննարկումն ավարտվելուց անմիջապես հետո:

ԱՐԱ ԲԱԲԼՈՅԱՆ

2018թ. փետրվարի 23